

«Aged, Blind, and Disabled Federal Poverty Level» (տարեց, կույր և հաշմանդամ անձանց չքավորության դաշնային մակարդակի) ծրագրի շրջանակների ընդլայնում

Կարևոր նորություն Ձեր առողջության ապահովագրության վերաբերյալ

Հարգելի նպաստառու

Հնարավոր է, որ Դուք բավարարեք անվճար «Medi-Cal»-ում ընդգրկվելու պահանջները:

California-ի նոր օրենքներն ընդունվեցին: Դրանցից մեկը բարձրացնում է «Aged, Blind & Disabled Federal Poverty Level» (ABD FPL) (տարեց, կույր և հաշմանդամ անձանց չքավորության դաշնային մակարդակի) ծրագրի եկամտի սահմանաչափը: Մյուսը թույլ չի տալիս որոշ անձանց զրկվել ABD FPL ծրագրի իրավունակությունից, երբ նահանգը սկսում է վճարել նրանց «Medicare Part B»-ի ապահովագինը: Որոշ անձինք, որոնք նախկինում իրավունակ չէին, 2020 թ. դեկտեմբերի 1-ից կարող են անվճար «Medi-Cal» ստանալ:

Ամսական եկամտի նոր սահմանաչափը մեկ անձի համար \$1,488 կամ դրանից ցածր է, իսկ զույգի համար՝ \$2,003՝ որոշակի ծախսեր հանելուց հետո: Եկամտից կարող եք հանել առողջության ապահովագրության ապահովագինը, այդ թվում՝ «Medicare Part B»-ի ապահովագինը, Ձեր վաստակած եկամտի առնվազն կեսը և որոշ աշխատանքային ծախսեր:

Եթե Դուք բավարարում եք եկամտի նոր սահմանաչափի պահանջները, ապա կարող եք իրավունակ դառնալ անվճար «Medi-Cal»-ի համար, եթե այժմ վճարում եք՝

- ամսական ապահովագին «250 Percent Working Disabled program»-ի (աշխատող անձանց 250 տոկոս անաշխատունակ ծրագրի) համար կամ
- ամսական ապահովագին՝ առողջության որևէ այլ ապահովագրության համար:

Դուք կարող եք իրավունակ լինել նաև այն դեպքում, եթե անդամագրվել եք «250 Percent Working Disabled program»-ին (աշխատող անձանց 250 տոկոս անաշխատունակ ծրագրին)՝ ծախսերի բաժին չվճարելու համար:

Եթե կարծում եք, որ կարող եք իրավունակ լինել անվճար «Medi-Cal»-ի համար, զանգահարեք Ձեր շրջան:

Որպեսզի ավելին իմանաք «Medi-Cal»-ի և այն մասին, ինչպես կարող է ABD FPL ծրագրի ընդլայնումն ազդել Ձեզ վրա, զանգահարեք Ձեր շրջան: Այդ տառի տակ շրջանային գրասենյակների և նրանց հեռախոսահամարների ցուցակ կա:

Ընդհանուր հարցերով զանգահարեք «Medi-Cal»-ի անվճար Օգնության հեռախոսագիծ՝ **1-800-541-5555** (TTY 1-800-430-7077) հեռախոսահամարով: Օգնության հեռախոսագիծը բանավոր թարգմանչի անվճար ծառայություններ է տրամադրում: Հարցերը կարող եք նաև ուղարկել «Department of Health Care Services»՝ ABDexpansion@dhcs.ca.gov հասցեով:

Շնորհակալություն,

Department of Health Care Services